ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԼՈՌԻՈՒՄ ԺԸ. ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՒ ԺԹ. ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Ուշ միջնադարում Լոռիի թեմը ենթակա էր Էջմիածնի կաթողիկոսությանը, իսկ Իմերեթի, Աբխազիայի հայկական եկեղեցական թեմերը, Բորչալուի եւ Ղազախի թեմերը (բացառությամբ Սանահինի վիճակի) ենթարկվում էին Հաղպատի արքեպիսկոպոսին:

Հայտնի է, որ Լոռիի մի շարք վանքեր (Սանահին, Օձուն) խոշոր կալվածատերեր էին, ունեին բազմաթիվ գյուղեր, այգիներ, արտեր, ջրաղացներ եւ այլն, որոնցից տարեկան զգալի եկամուտներ էին ստանում: Խոշոր հողատեր էր Հաղպատի վանքը: Ամեն տարի վանքերի ներկայացուցիչները մեկնում էին վանքապատկան գյուղերը՝ վանքի համար մթերք եւ այլն հավաքելու:

ԺԸ. դ. վերջին Լոռիի գյուղերի մի մասը շարունակում էին մնալ վանքապատկան՝ Օձունի, Սանահինի կամ Հաղպատի վանքերին պատկանող: Սակայն ժամանակի ընթացքում վանքապատկան հողերը կրճատվում են հօգուտ կալվածատիրական եւ պետական հողատիրությունների: Դա արդյունք էր ինչպես հայ (Լորիս-Մելիքյան, Քալանթարյան, Շահվերդյան, Արղության եւ այլ ազնվականական տոհմերի պատկանող) եւ վրացի կալվածատերերի կամայականությունների, այնպես էլ ԺԹ. դ. սկզբին Լոռիի՝ Վրաստանի, ապա՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու: Եղել են գյուղեր, որոնք մասամբ վանքապատկան էին, մասամբ՝ կալվածատիրական: Որնակը (Ակներ) Ալավերդուց 3-4 կմ հարավ-արեւելք, Սանահին եւ Հաղպատ գյուղերի միջեւ, եղել է Սանահինի վանքի, որոշ ժամանակ նաեւ՝ Լոռու-Մելիքյանների եւ Արղությանների սեփականությունը[1]: Երբ ԺԸ. դ. վերջերին Արցախի մելիքներից Մելիք-Միքել Գուրգենյանն իր գերդաստանով տեղափոխվում է Ղազախ, նրա ազգակիցների մի ճյուղը հաստատվում է Շամշուդեում, ապա՝ տեղափոխվում Թիֆլիս եւ կոչվում Խանդամյան: Այս տոհմից Երվանդեսը (Վանես, Էվանես) իր խաչեղբայր իշխան Զաքարիա Արղությանցի հրավերով Թիֆլիսից տեղափոխվում է Մադան՝ նշանակվելով պղնձահանքերի աշխատանքների վերահսկիչ եւ որպես պարգեւ ստանում Սանահնաձորում՝ այգի, Սանահին գյուղում՝ տնատեղ եւ կալվածք[2]: Սանահինի հողերի մի մասը ԺԹ. դ. վերջերին պատկանել է Արղության-Երկայնաբազուկների գերդաստանին, մի մասը՝ Սանահինի վանքին:

Բացի վերը նշվածից, վանքապատկան հողերը խիստ տուժել են օտարերկրյա ասպա-

1 Տե՛ս «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1880, 13-ը սեպտեմբերի, թ. 70:

2 Տե՛ս **Ռ-օստոմ-բէկ Երզնկեաց**, Ազգաբանութիւն տոհմին Երուանդեանց ի Սանահին, Թիֆլիս, 1896, էջ 9-10:

տակություններից, քանի որ բնակչության ոչնչացման եւ արտագաղթի հետեւանքով կրճատվել է վանքապատկան հարկատու բնակչության թիվը:

1795 թ. գարնանը պարսից Աղա Մահմադ խանը (1794-1797) Թեհրանից արշավեց եւ նվաճեց Ատրպատականը, Թավրիզը, ապա՝ Երեւանը եւ շարժվեց դեպի Թիֆլիս: Այդ արշավանքն ու Թիֆլիսի ավերումը վատթարացրին իրավիճակը Վրաստանում: Ղարաբաղի Իբրահիմ խանը Բորչալուից թուրք ազգաբնակչություն է գաղթեցնում Արցախ՝ թուրքական տարրն այնտեղ բազմացնելու նպատակով[3]: Այս վնասը մասամբ լրացնելու համար վրաց թագավոր Հերակլ II-ի (1744-1798) հրամանով տարբեր կողմերից (հիմնականում՝ Արցախից եւ Գանձակից) հայ բնակիչներ էին վերաբնակեցվում Վրաստանում եւ Սոմխեթում՝ Լոռիի հյուսիսային մասերում (Բոլնիս եւ այլ վայրեր) եւ Թիֆլիսում, որպեսզի պաշտպանեն Վրաստանի արեւելյան եւ հարավային սահմանները մահմեդական հորդաների հարձակումներից[4]: Այդ գաղթերի արդյունքում Վրաստանում, հատկապես Թելավում, բնակություն են հաստատել նաեւ Լոռիից գաղթած հայեր, մասնավորապես Հաղպատից, որի անունն էր կրում քաղաքի մի ամբողջ թաղամաս[5]:

Աղա Մահմադ շահը Թիֆլիսն ավերելուց հետո գնաց Գանձակ, որտեղից ասպատակություններ էր կատարում դեպի Լոռի եւ Արցախ[6]: Ավերածություններից տուժեց ամբողջ Փամբակաձորի հովիտը, խիստ նվազեց Լոռիի, Փամբակի, Ղազախի բնակչությունը[7]: Վարդան Օձնեցին գրում է. «..գերելով անցեալ ապա մէջ ձորափորայ...ի գիշերի զգիւղն Օձուն:...գերեցին անդէն զվաթսուն անձիւն զայր եւ զկին մեծ եւ փոքր»[8]: Մեծ հարվածներ կրեցին մինչ այդ Շահ-Աբբասի (1604 թ.), Նադիր շահի (1736 թ.), Օմարի արշավանքներից տուժած եւ գրեթե անմարդաբնակ դարձած Սանահին եւ Հաղպատ գյուղերը: 1795 թ. Սանահինի վանքն ամայի էր[9]: «Յետ աւերման աշխարհին Վրաց ի Պարսիկ աղայ Մահմադ խանէ ամայի մնաց հռչակաւոր մենաստուն Հաղբատոյ»[10]: Հաղպատի թալանված միաբանները ցրվեցին, իսկ Հաղպատ գյուղը մի փոքր ավելի ուշ՝ մոտավորապես 1796 թ. վրաց թագավորի կողմից որպես պարգեւ տրվեց վրացի իշխան Բարաթովներին՝ այնտեղ բնակություն հաստատելու պայմանով[11]:

Այնուամենայնիվ, գավառների հայ բնակչությունը շարունակում էր հանդիսանալ վանքերի պահպանման հիմնական աղբյուրը: Այսպես օրինակ՝ 1781 թ. ապրիլին Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսը թիֆլիսցի նորընծա Դավիթ վարդապետին «ժողովարար կարգեալ իւղի, եւ պանրի, եւ մսացուի, եւ երկաթեայ, եւ փայտեայ գործեաց ի վերայ Ղազախու, Բամբակաձո-

3 Տե՛ս **Д. Багратиони**, История Грузии, Тбилиси, 1962, էջ 166-167:

4 Տե՛ս **Ա. Ջամալեան**, Հայ-վրացական կնճիռը. «Հայրենիք», Բոստոն, 1928, ապրիլ, թ. 6, էջ 78:

5 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 1053, թ. 31:

6 Տե՛ս «Հայկական աղբյուրները Աղա Մուհամմեդ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797)», աշխ.՝ Ռ. Տիգրանյանի, Երեւան, 1981, էջ 227, **Ե. Լալայան**, Երկեր, հ. 2, Երեւան, 1988, էջ 207:

7 Տե՛ս Մատենադարան (ՄԱՄ), ձեռ. 4463, թթ. 15-16, 22-26, 4331, թթ. 130-164:

8 Անդ, թ. 134:

9 Տե՛ս ՄԱՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 71, թ. 1:

10 **Ռ-օսրոմ-բէկ Երզնկեաց**, Նկարագրական տեղեկութիւն աշխարհահռչակ սրբոյ Նշանի վանիցն Հաղբատայ. «Մեղու Հայաստանի», 1861, թ. 59, էջ 401:

11 Տե՛ս **Ալ. Երիցյան**, Ամենայն հայոց Կաթողիկոսությունը եւ Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 215:

բու, Շուլաւերու եւ Լօռու»[12]: Նոյն թվականին Ղուկաս Կաթողիկոսը նամակով Մարտիրոս վարդապետին լիազորում է դարձյալ Ղազախում, Փամբակաձորում, Լոռիում, Բոլնիսում եւ Շուլավերում բնակվող համայն «Շամշատինու» ժողովրդից հավաքելու հարկերը. «[Յ-]ետ այսորիկ, ըստ նախնաւանդ սովորութեան սրբոյ Աթոռոյս, առաքեաց սրբազան Վեհն զՄարտիրոս վարդապետն ի Ղազախ, ի Բամբկաձոր, ի Բօռչալու, եւ ի Լօռի, նաեւ՝ ի Բոլնիս եւ Շուլաւեր բնակեալ համայն Շամշատինու ժողովուրդսն,...ի ժողովել ի նոցունց զուտելիս եւ զայն հարկաւոր պիտոյս...»[13]:

1782 թ. մայիսին Ղուկաս Կաթողիկոսը Կարապետ վարդապետի խնդրանքով վրաց Գեորգի թագաժառանգին նամակ է հղում այն մասին, որ Լոռու բերդի բնակիչները պատկանում են Էջմիածնի վիճակին, որովհետեւ նրանք ջավախքցի, բյուրականցի եւ ապարանցիներ են. «Կոնդակ եւս գրեաց սրբազան Վեհն առ Լօռու բերդի եւ իւր մերձակայից ժողովուրդսն, որք էին՝ ջաւախէթցիք, բիւրականցիք եւ ապարանցիք, որք աղերսանօք եւ բազմակնիք թղթով խնդրէին առնել զինքեանս տէրունի սրբոյ Աթոռոյս, զի չկամէին լինիլ թեմ Սանահնու (որոյ վիճակ էր Լօռի) եւ ոչ Հաղպատու, այլ սրբոյ Աթոռոյս կամէին լինիլ տէրունի վիճակ»[14]:

1801 թ. Վրաստանի կազմում Ռուսաստանին անցնելու նախօրյակին եւ ավելի ուշ Լոռիում ավելանում է կալվածքներ ունեցող վրացի ազնվականների թիվը՝ ինչպիսիք էին Օրբելիանիները եւ Բագրատիոն Մուխրանսկին[15]: Վրաց Գեորգի XII (1798-1800) թագավորի օրոք մոուրավների պաշտոն ունեցած իշխանների եւ ազնվականների ցուցակում Բորչալուում եւ Շնողում հիշատակվում է իշխան Դավիթ Աբաշիձեն[16]: Նախկին վանքապատկան գյուղերից շատերը կամ դրանց հողերի մի մասը եւս դառնում են կալվածատիրական: Ամոջը, Հագվին, որոնք ԺԸ. դ. Օձունի վանքի սեփականությունն էին, ԺԹ. դ. պատկանում էին Լոռու-Մելիքյանների տոհմին:

Չնայած այս ամենին, Լոռիի վանքերը շարունակում էին պահպանել հողի սեփականատիրոջ իրենց կարգավիճակը: ԺԹ. դ. սկզբին Հաղպատի արքեպիսկոպոսին էին պատկանում Շնող, Ճոճկան, Ախթալա, Որնակ եւ այլ գյուղեր, այգիներ, արոտավայրեր, Մադանի պղնձահանքը: Սակայն վանքի տնտեսությունը հետզհետե թուլանում է, ինչից օգտվելով, որոշ գյուղեր զավթում է տեղի կալվածատեր իշխան Բարաթովը:

1815-1820-ական թթ. վանքերի եկամուտների եւ ծախսերի, տարբեր վանքապատկան գյուղերի մկրտվածների, ամուսնացածների, մահացածների ծխամատյանների ուսումնասիրությունը հանգեցնում է եզրակացության, որ Լոռիի գյուղերն ունեցել են վանքապատկան բնակչության մեծ զանգված (թեեւ ցուցակները խիստ թերի են, քանի որ տվյալները վերաբերում են միայն վանքապատկան գյուղերի արական բնակչությանը): Քահանաների կողմից կազմված առանձին անհատների գույքացուցակները եւս դրա ապացույցն են:

---

12 «Դիվան Հայոց պատմության», աշխատասիրությամբ՝ Վ. Գրիգորյանի, հ. Ա., Երեւան, 1984, էջ 232:

13 Անդ, էջ 299:

14 Անդ, էջ 323-324:

15 Տես **Ս. Վիրաբյան, Գ. Եթիմյան**, Մեծ Ղարաքիլիսա, հ. 1, Երեւան, 2002, էջ 140:

16 Տես "Акты, собранные Кавказской археографической комиссией", т.1, Тифлис, 1866, н.157, էջ 195:

1815 թ. դրությամբ Հաղպատ գյուղն իր բնակիչներով պատկանել է Լոռիի Պոպունաբեկով ազնվականներին, այն իրենց սեփականությունն են համարել նաեւ Բարաթյանները (Բարաթովներ) եւ Թիֆլիսի հայոց թեմը[17]: Բնականաբար, վանքն ուներ բավական թվով վանքապատկան բնակչություն, որից մեծ եկամուտներ էր ստանում: Ուստի ողջ 1815-1816 թթ. գյուղի սեփականության շուրջ պայքար էր ընթանում Բարաթովների, Պոպունաբեկովների եւ Թիֆլիսի հայոց հոգեւոր թեմի միջեւ: Հավանաբար, այս դրդապատճառներից ելնելով, Ներսես արքեպիսկոպոսը 1815 թ. գրություն է հղում կառավարչապետ Ա. Երմոլովին՝ հիշեցնելով Հաղպատ գյուղն իր բնակիչներով Հաղպատի վանքին պատկանելու մասին[18]:

1817 թ. Ղալաչա, Կողբ, Դոսքլու, Բարան, Կոթիգյուղ, Բաղանիս եւ Ծնող գյուղերի բնակչությանն ուղղված շրջաբերականում Ներսես Աշտարակեցին նշում է, որ ուղարկում է Խաչատուր վանականին՝ որպեսզի եկեղեցական հարկերը հանձնեն նրան[19]: 1826 թ. Ներսես Աշտարակեցու գրությամբ Մարտիրոս ավագ քահանա Ջաղինյանը գործակալ է նշանակվում վանքապատկան 10 գյուղերի վրա եւ պաշտոնավարության հրահանգներ է ստանում[20]:

1820-ական թթ. Լոռիի շրջանի շատ հողեր արդեն պետական էին, որոնց վրա ապրում էին Արեւմտյան Հայաստանից ու այլ վայրերից եկած հայեր ու թուրքեր[21]: Այդ ժամանակից, հատկապես 1830-ական թվականներից սկսած, վանքապատկան հողերի քանակի մեջ նկատվում է կտրուկ կրճատում, ինչպես նաեւ վանքերի եկամուտների նվազում:

1833 թ. ապրիլի 21-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Հովհաննես Կարբեցին (1762-1849) Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետ Գ. Ռոզենին գանգատվում է վրաց իշխաններից, որոնք ասպիճանաբար սեփականացնելով Հաղպատի վանքի հողերը (Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո Հաղպատը Սոմխեթ կամ Բորչալու վիճակի եւ Ղազախի հոգեւոր կենտրոնն էր) տիրել են ամբողջ գյուղին՝ եկեղեցու սեփականությունը թողնելով միայն 188 օրավար վարելահող. այնուհետեւ իշխան Բարաթովը սկսել է նեղել Հաղպատում երկրագործությամբ զբաղվող հինգ վանքապատկան ճորտ ընտանիքների[22]:

Աբրահամ Իսրայելյանը 1836 թ. հունիսի 5-ին գրում է, թե գրություն է ներկայացրել Բորչալուի պրիստավին, Հաղպատի վանքի ճորտերի տավարն արածեցնելու մասին, բայց «Պրիստավը իր նախորդի նման թույլ չի տվել, պատճառաբանելով, որ իր նախորդի ժամանակից մնացած արձանագրություն կա, թե արոտները պատկանում են իշխան Բարաթովին»[23]:

Սանահինի վանական Հարությունը 1833 թ. նոյեմբերի 5-ին Սինոդին ներկայացրած իր

17 Տես ՄԱՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 27, վավ. 79, թթ. 1-2, վավ. 106, թթ. 1-11:
18 Անդ, թղթ. 27, վավ. 58, թթ. 1-5:
19 Տես անդ, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ.166, վավ. 555:
20 Տես անդ, թղթ.164ա, վավ. 354, էջ 85-86:
21 Տես **Ս. Վիրաբյան, Գ. Երթիմյան**, նշվ. աշխ., էջ 140:
22 Տես ՄԱՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 78, վավ. 41, թթ. 1-4:
23 Անդ, թղթ. 89, վավ. 198, թ. 2:

հաշվեկրվության մեջ նշում է, որ ժողովուրդը աղքատության պատճառով հազիվ թե մինչեւ հունվար կարողանա վանքին տալ իր նվերները[24]:

Այսպիսով, չնայած աննպաստ հանգամանքներին, անգամ ԺԹ. դ. սկզբին Լոռիի վանքերը շարունակում էին պահպանել կալվածատիրոջ իրենց կարգավիճակը եւ մնալ գերիշխող տարածքի սոցիալ-տնտեսական կյանքի դերակատարության մեջ, ինչի մասին վկայում են հենց վանքերի դիվանները, որոնցից ցավոք շատ քիչ մասն է պահպանվել:

Չպետք է մոռանալ մի կարեւոր հանգամանք, որ այդ վանքերի, հատկապես Հաղպատի վանքի ելքի ու մուտքի մատյանները բավականին նյութ են տալիս վանական տնտեսությունների վիճակի, հետեւաբար նաեւ՝ բնակչության վերաբերյալ: ԺԸ. դ. վերջին Վրաստանում եւ նրան ենթակա հայկական տարածքներում բնակվող հայերի թվաքանակի մասին պաշտոնական վիճակագրություն գոյություն չունի: Միայն Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող ծիսամատյաններն աղքատիկ տեղեկություններ են հաղորդում գյուղերի բնակչության վերաբերյալ: Վանքերի եկամուտների եւ ծախսերի, տարբեր վանքապատկան գյուղերի մկրտվածների, ամուսնացածների, մահացածների ծիսամատյանները արժեքավոր եւ եզակի աղբյուր են ԺԸ. դ. վերջի, մասամբ նաեւ ԺԹ. դ. սկզբի Լոռիի բնիկ-տեղացի բնակչության էթնիկ կազմի եւ թվաքանակի մասին: Այդ տեսանկյունից դրանք պատմական մեծարժեք փաստաթղթեր են:

24 Տե՛ս անդ, թղթ. 78, վավ. 105, թ. 1: